891.71
Գ-83

3502

1160

Գ-որկի Մ.
Մի ամիսն աշնան
Թիֆլիս - 1901

Ամ 1901

0227 5/15 78

1936ա

№ 20 03

83

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՑ

ՄԻ ԱՆԳԱՄ ԱՇՆԱՆԸ...

Թարգմ. Ս. Շահումեանցի

1901
550
9

ԹԻՖԼԻՍ

Կ. Մարտիրոսեանցի տպարան || Тип. К. Мартиросіанца.

Орбеліановская ул., д. № 1—2.

1901

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1063

Дозволено цензурою.
Тифлисъ, 25 мая 1901 года.

. . Մի անգամ աշնանը ես մի շատ անյարմար ու անախորժ դրութեան մէջ ընկայ։ Մի օտար քաղաք էի եկել. ոչ մի ծանօթ չպատահեց, գրպանումս էլ փող չկար. և ես մնացի այդպէս առանց բնակարանի ու առանց կոպէկի։

Առաջին օրերը ես ծախեցի հագուստիս մի մասը, որ կարելի էր ծախել։ Յետոյ ուղևորուեցի դէպի նաւահանգիստը, որ գտնւում է «Գետաբերան» կոչւող հեռաւոր քաղաքամասում։ Նաւաղնացութեան ժամանակ այնտեղ կեանքը եռում է. մարդ հեշտութեամբ կարող է իր համար գործ գտնել։ Իսկ այդ ժամանակ ամեն ինչ դատարկ էր և խաղաղ, որովհետև արդէն հոկտեմբեր ամսւայ վերջերն էին։

Ես թափառում էի միայնակ դատարկ շինութիւնների ու փոքրիկ տախտակամած խանութների միջև ու հազիւ էի շարժում յոգնած ոտքերս։ Աչքերս դետնին յառած, ես ուզում էի այդ ցեխերի մէջ ուտելիքի որևէ մնացորդ գտնել և մտածում

էլ միևնոյն ժամանակ. ի՞նչ լաւ բան է կուշտ լինելը...

Քաղաքակրթութեան ներկայ պայմաններում հոգեկան քաղցը աւելի հեշտ կարելի է յագեցնել քան մարմնականը: Դուք թափառում էք երկար փողոցներով. ձեր շուրջը բարձրանում են գեղեցիկ շինութիւններ, որոնց մասին ամենայն համարձակութեամբ կարող էք ասել, որ նրանք նոյնչափ գեղեցիկ են և ներքուստ. նոյնչափ ճաշակով ու շքեղ կահաւորուած: Այդ բոլորը կարող է ձեր մէջ քաղցր մտածմունքներ առաջ բերել ճարտարապետութեան, առողջապահութեան և էլի ուրիշ շատ մեծ-մեծ բաների մասին: Ձեզ պատահում են տաք և գեղեցիկ հագնուած մարդիկ. նրանք անչափ բարի են և քաղաքաւարի. նրանք ամենայն զգուշութեամբ խոյս են տալիս ձեզանից, որպէսզի չընկատեն ձեր ցաւալի գոյութիւնը...: Ճստուած վկայ, քաղցած մարդու հոգին աւելի լաւ է կերակրւում միշտ, քան կուշտ մարդու հոգին: Ահա՛ ձեզ մի դրութիւն, որից կարելի է շատ սրամիտ եզրակացութիւն դուրս բերել կուշտ մարդկանց օգտին:

...Գիշերը մօտենում էր: Անձրև էր գալիս և հիւսիսից մռնչալով փչում էր քամին: Նա կատաղի շուռց էր բարձրացնում դատարկ մնացած փայտաշէն խանութներում և ծեծում էր հիւրանոցների տախտակած պատուհանները: Գետի ալիքները նրա հարուածներից ուռչում ու փրփրում էին և կատաղի

սրագութեամբ, միմեանց վրայ թռչելով, շտապում, անյայտանում էին մթութեան մէջ... Կարծես, գետը զգում էր, որ ձմեռը մօտենում է, և վախեցած փախչում էր սառոյցի կաշկանդող շղթաներից, որ հենց այդ գիշեր կարող էր գցել նրա վրայ հիւսիսային քամին: Երկինքը թանձր էր ու խաւար, այնտեղից անընդհատ տեղում էին անձրևի մանր կաթիլներ... Քիչ հեռւում նշմարւող երկու չորացած ու ծռւած ծառերը և նրանց մօտի՝ կողքի վրայ ընկած նաւակը — լրացնում, ընդգծում էին բնութեան այդ տխուր տեսարանը:

Յատակը կոտրւած, շուռ եկած նաւակ և սառը քամուց կողոպտւած, ծեծւած ու ծերացած ծառեր... Զուրջս ամեն ինչ աւերւել ու անապատ է դարձել. երկինքը շարունակում է սգալ, արտասւել: Մռայլ է և դատարկ ամեն ինչ: Կարծես ամեն բան իմ շուրջը սկսել է մեռնել. շուտով միմիայն ես պէտք է մնամ կենդանի, իսկ յետոյ ինձ էլ սպասում է նոյն սառը մահը...:

Այդ ժամանակ ես 18 տարեկան էի. — երանելի ժամանակ...

Ես երկար թափառեցի սառն ու խոնաւ աւազներով, ատամներիս կրճատոցով շատ երգեր հիւսեցի սովի ու ցրտի պատւին, և յանկարծ փոքրիկ խանութներից մէկի յետևը տեսայ մի փոքրիկ կծկւած ու գետնին կպած կանացի մարմին: Անձրևից թրջւած շորերը կպել էին նրա կռացած ուսերին:

Ես մօտեցայ նրան ու սկսեցի դիտել։ Նա ձեռքով փորում էր թաց աւազը և ուզում էր, ըստ երևոյթին, անցք բանալ դէպի խանութի ներսը...

— Այդ ինչի համար ես փորում, հարցրի ես, նստելով կողքին։

Նա մի ճիչ արձակեց և վեր թռաւ։ Այժմ, երբ նա, դիմացս կանգնած, վախեցած նայում էր ինձ վրայ իր լայն բացած կապոյտ աչքերով, ես տեսայ, որ դա իմ հասակակից մի աղջիկ է, վերին աստիճանի գրաւիչ դէմքով, որը, դժբախտաբար, զարդարուած էր երեք հատ մեծ կապոյտ բծերով։ Այդ մի փոքր փչացնում էր տպաւորութիւնը, թէև կապտածները շատ կանոնաւոր էին դասաւորուած. մի-մի հատ հաւասար չափի աչքերի տակը և մի հատ ճակատի մէջտեղը։ Երևում էր, որ խփող ձեռքը կատարելագործել է մարդկային դէմքեր փչացնելու արհեստում։

Աղջիկը նայում էր ինձ վրայ, և նրա աչքերում փայլող երկիւղը հետզհետէ մարում, անյայտանում էր...։ Ահա նա աւազոտ ձեռքերը թափ տուեց, ուղղեց գլխի չիթ աղլուխը, կծկուեց ու ասաց.

— Ինչպէս տեսնում եմ, դու էլ ես սոված... դէ, մի փորիր տեսնենք... Իմ ձեռքերը յոգնել են։ Այնտեղ, — նա գլխի շարժումով ցոյց տուեց խանութը, անպատճառ հաց կլինի, զուցէ և երշիկ։ Այս խանութում դեռ առուտուր կայ...

Ես սկսեցի փորել. իսկ նա մի քիչ կանգնեց,

նայեց ինձ վրայ, յետոյ նստեց իմ կողքին և սկսեց օգնել...

Մենք լուռ աշխատում էինք։

Ես չեմ կարող հիմայ հաստատ ասել, յիշում էի արդեօք այդ ժամանակ քրէական օրէնքների հաստափոր ժողովածուն. բարոյագիտութիւն, սեփականութեան իրաւունք և այլ այսպիսի բաներ, ոչ, ինչպէս ասում են իմաստուն մարդիկ, երբէք չպէտք է մոռանալ կեանքում, ոչ մի դիպուածում...։ Որպէսզի կարելոյն չափ մօտ լինեմ ճշմարտութեանը, խօստովանում եմ ես, կարծեմ, այնքան տարուել էի փորելով, որ ամեն բան մոռացել էի, բացի... այն բանից, ինչ որ կարող էի զտնել խանութում։

Արդէն մթնում էր։ Թաց ու ցուրտ խաւարը հետզհետէ թանձրանում էր իմ շուրջը։ Ալիքների աղմուկը հետզհետէ խլանում էր, իսկ անձրևը աւելի ու աւելի ուժգին ծեծում էր նաւակի տախտակները...։ Հեռուից լսւում էր գիշերապահի ճրրանի տխուր ու մելամաղձոտ ձայնը...

— Յատակը տախտակած չի՞ լինի արդեօք – կամաց հարցրեց ինձ իմ օգնականը։ Ես չհասկացայ ինչի մասին է հարցնում և լռեցի։

— Գուցէ տախտակած է... Այդ ժամանակ մեր չարչարանքը իզուր կլինի. հողը կը փորենք, կը հասնենք տախտակներին. յետո՞յ... Ուրիշ լաւ է կողպէքը կոտրենք... Թոյլ կողպէք է երևում...

Լաւ մտքերը շատ սակաւ են ծագում կնոջ գլխում, բայց և այնպէս... ծագում են, ինչպէս տեսնում է՝ Ես միշտ գնահատել եմ լաւ մտքերը և աշխատել եմ կարելոյն չափ օգտուել նրանցից։

Կողպէքը գտայ, քաշեցի և դուրս պոկեցի իր օղակների հետ միասին... Ընկերուհիս խսկոյն օձի պէս գալարուեց ու ներս սողաց խանութը բացուած քառանկիւնի անցքով։

—Կեցցէս տղայ,—բացականչեց նա ներսից։

Կնոջ մի փոքրիկ գովասանքը ինձ համար աւելի արժէ, քան տղամարդի երկար գովաբանութիւնը, կուզէք լինի այդ տղամարդը նոյն իսկ աւելի պերճախօս, քան բոլոր հին ու նոր հռետորները միասին վերցրած։ Բայց այն ժամանակ տրամադրութիւնս այսքան լաւ չէր. և ես, առանց ուշադրութիւն դարձնելու ընկերուհուս սիրախօսութեան վրայ, կարճ ու վախեցած հարցրի՝

—Բան կա՞յ...

Նա միապաղաղ ձայնով սկսեց թուել իր գիւտերը։

—Մի գամբիւղ... շիշերով, դատարկ տոպրակներ... մի հովանոց... մի երկաթէ գոյլ...

Դրանցից ոչ մէկը չէր կարելի ուտել։

Ես զգում էի, որ յոյսերս չքանում են։

...Բայց յանկարծ նա ուրախ բացականչեց.

—Ահա՞... ա՛յ որտեղ է։

—Ո՞վ

—Հացը... մի բոմբի... միայն թրջված է, վերցրու...

Բոմբին ընկաւ ոտքերիս մօտ, իսկ քիչ յետոյ յայտնուեց և ինքը յարդելի ընկերուհիս։ Ես իսկոյն մաս-մաս արի Հացը և սկսեցի ագահ-ագահ ուտել...

—Դէ՛ ինձ էլ տուր տեսնենք... Եւ պէտք է այստեղից հեռանալ... ո՞ւր գնանք..

Նա ուշադրութեամբ նայեց չորս կողմը։

—Ա՛յ ինչ որ նաւակ է երևում, գնանք, նրա տակը նստենք։

—Գնա՛նք։

Եւ մենք ուղևորուեցինք դէպի նաւակը։ Երկուսս էլ ագահութեամբ լափում էինք մեր աւարը։ Դեռը մռնչում էր, անձրևը հետզհետէ մեծանում... Մի ինչոր տեղից երկար ու սուր շչուոց էր լսում. կարծես մէկը, ինչոր հզօր ու ոչ ոքից չվախեցող մի էակ սուլում ու ծաղրում էր մեր աշխարհի կարգերը, այդ անպիտան աշնանային երեկոն և մեզ՝ այդ երեկոյի երկու հերոսներիս. .։ Սիրտս կծկւում ու նեղում էր այդ շչուոցից։ Այնուամենայնիւ ես մեծ ախորժակով ուտում էի Հացը։ Բարեկամուհիս յետ չէր մնում ինձանից. և մենք այդպէս մօտենում էինք նաւակին։

— Անունդ ինչ է,—չգիտեմ ինչու հարցրի ես։

—Նատաշա, - պատասխանեց նա անտարբեր եղանակով։

Ես նայեցի նրան և սաստիկ ցաւ զգացի

սրտիս մէջ։ Յետոյ Հայեացքս ուղղեցի դէպի իմ առաջ ընկած մթութիւնը, և ինձ թւաց, որ բախտիս միշտ հեգնոտ ու այլանդակ դէմքը խորհուրդաւոր կերպով նայում է ինձ ու ժպտում...

...Անձրևը շարունակում էր ծեծել նաւակի լողերը, և նրա մեղմ շփշփոցը տխուր մտածմունքներ էր առաջացնում իմ մէջ։ Քամին շւռոցով ներս էր խուժում յատակի մի ճեղքից, որտեղ մի փոքրիկ տաշեղ, քամու շնորհիւ, շարունակ ինչ որ անհանգիստ ու ողբալի ձայներ էր հանում։ Գետի ալիքները ճողրում էին ափերը և նոյնպէս ողբալի ու յուսակտուր ձայներ հանում։ Նրանք կարծես մի ինչոր բան էին պատմում, որ վաղուց ձանձրացրել, զզուեցրել է նրանց, մի սրտամաշուկ բան, որից նրանք կուզենային փախչել, բայց որի մասին դեռ անհրաժեշտ է երկար խօսել, պատմել... Անձրևի շփշփոցը միանում էր ալիքների աղմուկի հետ, և նաւակի շուրջը, գորշ մթութեան մէջ, մի երկար հառաչ էր լսւում. դա՝ բնութեան անմիտ կատակներից զզուած, ամառւայ ու աշնան, տաքի ու ցրտի, արևի ու անձրևի անվերջ փոփոխութիւններից նեղացած ու յոգնած՝ ծերուկ-երկրագնդի երկար ու ծանր հառաչն էր...։ Քամին էլ իր շառաչիւնով տխուր, յուսահատ երգեր էր յօրինում ու տարածում գետի ալիքների ու նրա սև ու անբնակ ափերի վրայ...

Մեր տեղը, նաւակի տակը, զուրկ էր յարմարութիւններից. նեղւածք էր և խոնաւ. կոտրւած

յատակից մեզ դիպչում էին անձրևի ցուրտ կաթիլ-ները. քամին անտանելի էր։ Մենք լուռ նստել, դողում էինք։ Յոգնածութիւնից աչքերս փակւում էին։ Նատաշան մէջքը դէմ էր տւել նաւակի կողին և կուչ եկել, մի փոքրիկ գունդ էր դարձել։ Ծնկնե-ը ձեռքերով գրկած ու կզակը յենած նրանց վրայ, նա անթարթ նայում էր գետի կողմը, և նրա մեծ ու լայն բացած աչքերը աւելի ևս մեծ էին երևում իրանց տակի կապտածների շնորհիւ։ Նա բոլորովին չէր շարժւում. և այդ անշարժութիւնն ու լռու-թիւնը,— զգում էի,— կամաց-կամաց ինչ որ ահ էր զցում սրտիս մէջ. ես վախենում էի իմ հարևանու-հուց .. Ուզում էի խօսել նրա հետ, բայց չզգիտէի ինչպէս սկսեմ։

Նա ինքը խօսեց։

—Ա՜խ, անիծեալ կեանք...,— պարզ ու որոշ արտասանեց նա։

Եւ այդ գանգատ չէր բախտից։ Նրա ձայնի մէջ այնքան անտարբերութիւն կար, որ չէր կա-րելի ասածը գանգատի տեղ ընդունել։ Երևում էր, որ մարդ ուղղակի մտածել է կեանքի մասին, և եկել է մի որոշ եզրակացութեան, որ և յայտնում է այժմ. և որին ես չէի կարող պատասխանել առանց կեղծելու, առանց հակասելու ինձ։ Ես լուռ էի. իսկ նա կարծես իսկի չէր էլ նկատում ինձ, առաջ-ւայ պէս անշարժ նստած էր։

— Մարդ չի՛ էլ սատկում, պրծնի... նորից

խօսեց Նատաշան. այս անգամ կամաց և մտազրաղ։ Եւ դարձեալ զանգատի ոչ մի նշոյլ։ Դարձեալ երևում էր, որ մարդ մտածել է կեանքի մասին, նայել է իր վրայ և Հանգիստ Հոգով եկել է այն եզրակացութեան, որ իր անձը կեանքի ծաղրից ու կատակներից ազատելու համար նա մի բան միայն կարող է անել՝—«սատկել»...

Մտքի այդ չափ ճշտութիւնը և պարզութիւնը սիրտս լցրեց անասելի ցաւով ու զղջանքով, և ես զգում էի, որ, եթէ շարունակեմ լռել, լաց պէտք է լինեմ... Իսկ այդ ամօթ կլիներ մի կնոջ առջև. մանաւանդ որ նա ինքը ահա լաց չէր լինում։ Ես վճռեցի խօսել։

—Ո՞վ է թակել քեզ,—հարցրի ես, որովհետև չկարողացայ ուրիշ, աւելի մարդաւարի խօսք գտնել։

—Պաշկէն, ուրիշ ո՞վ պիտի լինի,—պարզ ու Հանգիստ պատասխանեց նա։

—Պաշկէն ո՞վ է։

—Իմ սիրեկանը... մի հացթուխ։

—Ձ՞ատ է ծեծում քեզ...

—Ձ՞ատ... ամեն հարբելուս ծեծում է։ Եւ յանկարծ նա աւելի մօտեցաւ ինձ ու սկսեց Պաշկի, իր և իրանց հարաբերութիւնների մասին երկար պատմութիւն անել։ Ինքը «փողոցն ընկած աղջկերանցից է, որոնք... և այլն», իսկ նա մի շէկ բեղերով, լաւ դարմօն ածող երիտասարդ է։ Նա յաճախ այցելելուս է եղել «Հասարակաց տունը» և իր ուրախ

բնաւորութեամբ ու գեղեցիկ շորերով, իր «դարսովի» կոշիկներով ու 15 ռուբլիանոց վերարկուով, գրաւել է Նատաշայի սիրտը։ Այդ ժամանակւանից Պաշկէն սկսել է մշտապէս «նիսիա օգտւել»... և երբ հաստատւել է այդ դերում, սովորութիւն է դարձրել իր համար վերցնել Նատաշայից այն փողերը, որ ուրիշ հիւրերը առանձին տալիս են եղել նրան իբրև նուէր, հարբել այդ փողերով և յետոյ գալ ծեծել Նատաշային...։ Բայց այդ դեռ ոչինչ. նա սկսել էր Նատաշի առաջ «բարձը փոխել», ուրիշ աղջկերանց հետևից ընկնել...

—Դէ դու ասա, սրտիս չէ՞ր դիպչի այդ... Ուրիշներից ես ինչո՞վ եմ պակաս...։ Նշանակում է ես նրա համար խաղալիք էի, ծաղրի առարկայ... ստո՜ր արարած։ Ընցեալ օրը իրաւունք վերցրի խաղեայկից, որ գնամ զբօսնելու. եկայ նրա մօտ, տեսնեմ Պուն'կէն հարբած-տրաքւած նստած է նրա սենեակում։ Ինքն էլ ի հարկէ հարբած էր։ Ասում եմ՝ «այ ստոր արարած, ստոր, խաբեբայ...» Նա վրա ընկաւ ինձ ու սկսեց ծեծել. ի՞նչ մազերից քաշ տալ յատակի վրայ, ի՞նչ ոտքերի տակ գցել, ջարդել... մի սաղ տեղ չթողեց...։ Եւ այդ դեռ էլի ոչինչ, շորերս ամբողջովին պատառոտեց... Ահա՛, նայիր սրանց։ Հիմայ ես ո՞ր քարովը տամ ղլուխս, ինչպէս երևամ խաղեայկին։ Բոլորը պատառոտեց, շորերս էլ, թիկնոցս էլ... բոլորովին նոր էր թիկնոցս հինգ ռուբլի էին տւել... գլխիս կապոցն էլ պոկեց...

Ա՜խ, Աստուած, Հիմայ ես ինչ անեմ, - վայ տուեց նա յանկարծ վշտացած ու խեղդուող ձայնով:

Վայ էր տալիս նոյնպէս հետզհետէ սաստկացող քամին... Ատամներս նորից սկսեցին պար գալ: Նա էլ կուչ էր գալիս ցրտից և արդէն այնքան մօտեցել էր ինձ, որ ես կարողանում էի մթութեան մէջ տեսնել նրա վիայլող աչքերը:

—Ի՜նչ գարշելի բաներ էք բոլոր տղամարդիկդ, խօսեց նա նորից: Ոտքերիս տակը կը գցէի ձեզ բոլորիդ... Որ մէկը առաջիս սատկելուս լինէր ձեզանից, ելեսին կըմթքէի, չէի խղճայ... կեղտոտ խոզեր...: Վնդստում էք, վնդստում, պոչներդ ժաժ տալիս շան նման, և հենց որ ինձ պէս մի անխելքը ձեռքներդ կնկնի, պատրաստ էք իսկոյն ոտնատակ տալ... գծուծ անասուններ...

Նրա հայհոյանքները շատ պէս-պէս էին, բայց ոյժ չկար մէջները. ոչ բարկութիւն և ոչ ատելութիւն դէպի այդ «գծուծ անասունները»: Ընդհանրապէս նրա խօսակցութեան տոնը շատ հանգիստ էր, բոլորովին չէր համապատասխանում ատածների մտքին և շատ աղքատ էր ձայնի ելևէջներով:

Բայց և այնպէս այդ ինձ վրայ աւելի էր ազդում, քան մինչև այդ ժամանակ իմ լսած բոլոր հոռետեսական ճառերն ու կարդացաց գրքերը: Այդպէս է. մեռնողի մի ճիգը աւելի բնական է, աւելի ուժեղ ու ցնցող, քան մահուան ամենաղեղարուեստական ու ամենաստոյգ նկարագրութիւնը:

Սիրտս շատ վատ էր. գուցէ աւելի ցրտից, քան թէ Հարևանուհուս ճառերից։ Ես ակամայից մի ծանր ու երկար տնքոց արձակեցի ու ատամներս կրճտացրի։

Հենց նոյն վայրկեանին երկու ձեռք փաթաթուեցին գլխովս, և ես լսեցի մի քաղցր ու մեղմ կարեկցութեամբ հնչող ձայն.

—Հա՛, ինչ պատահեց քեզ...

Ես պատրաստ էի ենթադրել, որ այդ հարցը տալիս է ինձ ոչ թէ Նատաշան, որը մի բոպէ առաջ բոլոր տղա մարդկանց գարշելի արարածներ յայտարարեց, ու այնքան հայհոյեց բոլորին.—այլ մի ուրիշը. բայց նա նորից սկսեց խօսել. և այս անգամ աւելի շուտ-շուտ։

—Ի՞նչ կայ, հա՛. հօ չես մրսում. սառել ես,.. այ անպիտան, նստել ես ու լռել. ինչո՞ւ չէիր ասում, որ մրսում ես։ Դէ պառկի՛ր, ձգի՛ր... ես էլ կպառկիմ։ Հա՛, այսպէս. հիմայ գրկի՛ր ինձ, լաւ գրկի՛ր։ Տեսնում ես, ինչ լաւ է. յետոյ մէջք մէջքի կպառկենք, այսպէս գիշերը կանցնի... Երևի գինու ես տուել գլուխդ.,. թէ՞ տեղից դուրս են արել... Բան չկայ...

Նա ինձ մխիթարում էր, սիրտ էր տալիս։

Օ՜, երբոյս անգամ նզովեալ լինեմ ես։ Ո՞րպիսի հեգնութիւն կեանքի կողմից։ Երևակայեցէք. այդ ժամանակ ես ամենալուրջ կերպով զբաղուած էի մարդկութեան ապագայի խնդրով. ես երազում էի

սոցիալական բարենորոգումների, քաղաքական մեծ-մեծ յեղափոխութիւնների մասին. խորը-խորը գրքեր էի կարդում, որոնց մէջ յայտնած մտքերը, թւում էր, չեն կարողանում լաւ ընբռնել նոյն իսկ իրանք հեղինակները...: Ես պատրաստւում էի մի «խոշոր ներգործող-հասարակական ոյժ» դառնալ, և ինձ թւում էր, որ մասամբ արդէն հասել եմ իմ նպատակին: Ցամենայն դէպս այդ ժամանակները ես երևակայում էի, որ ես մի բացառիկ իրաւունք ունիմ ապրելու, որպէս կեանքի համար մի անհրաժեշտ մեծութիւն, որպէս պատմութեան մէջ խոշոր դեր կատարելու ընդունակ մի մարդ...

Եւ ինձ էր, որ տաքացնում էր իր մարմնով մի պատիւը ծախած կին, մի անբախտ, ջարդուած ու տրորուած էակ, որը ոչ տեղ ունի կեանքում, ոչ գին. և որին ես դլխի չնկայ օգնելու, այն ինչ ինքը ինձ ահա օգնում էր... Իսկ եթէ դլխի էլ ընկնէի, հազիւ թէ կարողանայի որ և է կերպով օգնել նրան...

Ա՜խ, ես կուզէի, որ այդ բոլորը մի երազ լինէր, մի լիմար ու ճնշող երազ...

Բայց, աւաղ.. Անձրևի ցուրտ կաթիլները շարունակում էին թափել ինձ վրա. կուրծքս կպած էր մի ուրիշ տաք կրծքի, երեսս շոյում էր նրա տաք շնչառութիւնը... մի ողեշունչ, բայց այնքան կենդանարար...

Քամին ոռնում ու հեւում էր, անձրևը ծեծում

էր նաւակի տախտակները, այիքները հեռում ու աղմկում էին։ Մենք կպել էինք միմեանց, բայց դարձեալ դողում էինք ցրտից։ Եւ այդ բոլորը... իրականութիւն էր

Իսկ Նատաշան դեռ ինչ որ խօսում էր, և այնպիսի՜ քաղցր ու կարեկից ձայնով, ինչպէս միայն կանայք կարող են խօսել։ Այդ գգւող ու շոյող խօսքերից կրծքիս տակ մի ինչ որ տաքութիւն առաջացաւ, և այդ տաքութիւնից մի ծանր բան հալւեց ու ընկաւ սրտիս վրայից։ Այդ ժամանակ արտասուքի մի հեղեղ թափւեց իմ աչքերից, որը սրբեց, տարաւ այն բոլոր կեղտը, վիշտն ու չարութիւնը, որով լցւել էր սիրտս այդ գիշերւայ ընթացքում...

Իսկ Նատաշան խօսում, համոզում էր ինձ.

—Դէ՛, բաւական է, սիրելիս, ինչքա՞ն լաց լինես. բաւական է։ Ստծով, ամեն բան կանցնի, կըլաւանաս, նոր գործ կը գտնես. . բոլորը կանցնի...

Եւ շարունակ համբուրում էր ինձ... համբուրում էր անթիւ, անհամար ու ջերմ համբոյրներով...

Այդ առաջին կնոջ համբոյրներն էին, որ մատուցանում էր ինձ կեանքը, և, պէտք է աւելացնել, այդ ամենալաւ համբոյրներն էին իմ կեանքում, որովհետև բոլոր մնացածները ոչինչ չէին տալիս իմ հոգուն, չնայած որ շա՛տ ու շա՛տ աւելի թանգ էին նստում ինձ...

—Դէ սո՛ւս ասում եմ... Ես վաղը քեզ

համար մի տեղ կանեմ, գործ կը ճարեմ.. ,— կարծես երազում, լսում էի նրա քաղցր շշունչը։

...Մինչև լույս մենք այդպէս գրկուած, պառկած էինք։

Իսկ երբ որ լուսացաւ, դուրս եկանք նաւակի տակից և գնացինք քաղաք... Յետոյ բարեկամաբար բաժանուեցինք միմեանցից...

Դրանից յետոյ ես այլևս երբէք չեմ պատահել Նատաշին, թէև ամբողջ մի կէս տարի փնտռել եմ նրան քաղաքի բոլոր մութ խորշերում... Նրան, իմ անմման Նատաշին, որի հետ ես անց կացրի այդ գիշերը, մի անգամ աշնանը...

Եթէ նա մեռել է արդէն, որ շատ լաւ կլինէր նրա համար,—թող հանգչին հանգիստ նրա ոսկորները. իսկ եթէ դեռ կենդանի է, խաղաղութիւն նրա տանջող հոգուն. և թող երբէք նրա մէջ չարթնանայ իր անկման գիտակցութիւնը... որովհետև այդ կլինէր նրա համար մի նոր, աւելորդ ու անպտուղ տանջանք...

Բագուի Հայոց Մանկական Դպրոց
ԿԿԵՂ-ԾԽԱԿ. (ՏՊԱՅՈՑ)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Բ.Հ. Պետական Գրադարան
7/XI-1922
Ա. ՍԱՄՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3502

20.13